Արտատպված է՝ Ի. Ա. Բունին, Վիպակներ և պատմվածքներ, Ե., «Սովետական գրող» հրատարակչություն, 1998. Դորա Եսայանի թարգմանությամբ:

ՓԱՐԻԶՈՒՄ

Երբ նա գլխարկով էր,— քայլում էր փողոցում կամ կանգնած էր մետրոյի վագոնում,— ու չէր երևում, որ կարճ կտրած կարմրաշեկ մազերը խիստ արծաթին են տալիս, նրա նիհար, սափրած դեմքից, նիհար բարձրահասակ մարմնի ուղիղ կեցվածքից՝ երկար անջրանցիկ վերարկուով, քառասուն տարեկանից ավելի չէիր տա նրան: Միայն բաց գույնի աչքերն էին նայում զուսպ տխրությամբ՝ և խոսում, պահում էր նա իրեն կյանքում շատ բան տեսած ու ապրած մարդու նման: Մի ժամանակ նա ֆերմա էր վարձակալում Պրովանսում, ինչքան ասես պրովանսալյան կծու կատակներ էր լսել ու Փարիզում սիրում էր երբեմն քմծիծաղով դրանք համեմել իր սեղմ խոսքին: Շատերը գիտեին, որ դեռ Կոստանդնուպոլսում կինը թողել էր նրան և որ նա այդ ժամանակից ի վեր ապրում է մշտապես այդ ցավը սրտում: Նա երբեք ոչ մեկին չէր ասում այդ գաղտնիքը, չէր խոսում իր ցավից, սակայն երբեմն ակամա ակնարկում էր, տհաճ կատակում, եթե խոսք էր բացվում կանանց մասին.

— Rien n’est pas plus difficile que de reconnaître un bon melon et une femme de bien.[1]

Մի անգամ ուշ աշնանը, փարիզյան խոնավ մի երեկո նա մտավ ճաշելու Պասսի փողոցի մոտ մութ նրբանցքներից մեկում գտնվող փոքրիկ ռուսական մի ճաշարան: Ճաշարանին կից կար նպարեղենի խանութի նման մի բան. նա ակամա կանգ առավ դրա լայն պատուհանի առջև, որից երևում էին լուսամուտագոգին դարսված վարդագույն կոնաձև սնձողու շշերը և դեղին քառակուսի ընդախոտի թրմողու շշերը, սկուտեղների մեջ տապակած, արդեն չորացած կարկանդակներ, գույնը փոխած աղացած մսից կոտլետներ, մի տուփ հալվա, մի տուփ շպրոտ, հետո վաճառասեղանն էր խորտիկներով լցված, վաճառասեղանի ետև կանգնած էր անբարեհաճ ռուսական դեմքով տիրուհին: Խանութը լուսավոր էր և նա ցանկություն ունեցավ գնալու դեպի այդ լույսը՝ մութ նրբանցքի ցուրտ ու ասես ճարպոտ սալահատակից: Նա ներս մտավ, գլխի շարժումով բարևեց տիրուհուն ու մտավ խանութին կից դեռ դատարկ, թույլ լուսավորված սենյակ, ուր սպիտակին էին տալիս թղթով ծածկված սեղանիկները: Այնտեղ անշտապ հանեց ու կախարանի եղջյուրիկից կախեց մոխրագույն գլխարկն ու երկար վերարկուն, նստեց ամենահեռավոր անկյունում դրված սեղանիկի մոտ և մտացրիվ շփելով շիկամազ դաստակներով՝ ձեռքերը, սկսեց կարդալ անհամար քանակությամբ թվարկված խորտիկներն ու կերակուրները՝ մի մասը մեքենագրված, մի մասը մանիշակագույն թանաքով գրված, որ ծծվելով տարածվել էր ճարպոտ թղթի վրա: Հանկարծ նրա անկյունը լուսավորվեց ու նա տեսավ անտարբեր քաղաքավարի իրեն մոտեցող կնոջը, երեսուն տարեկանին մոտ, ուղիղ մազաբաժանով սանրված սև մազերով ու սև աչքերով, սև զգեստի վրայից ժանյակազարդ սպիտակ գոգնոց կապած:

— Bonsoir, monsieur,[2]— ասաց կինը հաճելի ձայնով:

— Bonsoir… Բայց դուք չէ՞ որ ռուս եք:

— Ռուս եմ: Ներեցեք, սովորություն է դարձել հյուրերի հետ խոսել ֆրանսերեն:

— Մի՞թե ձեզ մոտ ֆրանսիացիներ շատ են լինում:

— Բավական շատ, և բոլորն ուզում են անպայման ընդախոտի թրմողի, բլիններ, նույնիսկ բորշչ: Դուք արդեն որևէ բան ընտրե՞լ եք:

---

[1] Չկա ավելի դժվար բան, քան ճանաչել լավ ձմերուկն ու կարգին կինը *(ֆրանս.):*

[2] Բարի երեկո, պարոն *(ֆրանս.):*

— Ոչ, այստեղ այնքան շատ է... Ավելի լավ է դուք մի բան խորհուրդ տվեք:

Կինն սկսեց թվարկել սովոր տոնով.

— Այսօր մենք ունենք շչի ֆլոսկի, բիտկի կազակական ձևով… կարելի է տալ հորթի մսից թակովի կոտլետ կամ, եթե կամենաք, խորոված…

— Հիանալի է: Եթե կարելի է տվեք շչի և բիտկի:

Կինը բարձրացրեց գոտուց կախված բլոկնոտն ու մատիտի կտորով գրեց վրան: Նրա ձեռքերը շատ սպիտակ էին և ազնվական, զգեստը հին էր, բայց երևում էր, որ լավ կարվածքի է:

— Օղի կկամենայի՞ք:

— Հաճույքով: Դրսում սարսափելի խոնավություն է:

— Խորտիկներից ի՞նչ կկարգադրեիք: Կա հիանալի դանուբյան սելյոդկա, նոր ստացված կարմիր խավիար, թեթև աղը դրած վարունգ…

Նա նորից նայեց կնոջը. ժանյակազարդ սպիտակ գոգնոցը շատ գեղեցիկ է սև զգեստի վրա, դրանց տակ գեղեցիկ երևում են ուժեղ ջահել կնոջ կրծքերը... հաստլիկ շրթունքները ներկված չեն, բայց թարմ են, գլխին պարզ փաթաթված է սև ծամը, սակայն սպիտակ ձեռքի մաշկը խնամված է, եղունգները փայլուն են թեթև վարդագույն, երևում է մանիկյուրը…

— Ինչ կկարգադրեի որպես խորտի՞կ,— ասաց նա ժպտալով:— Եթե կարելի է, միայն սելյոդկա տաք կարտոֆիլով:

— Իսկ ի՞նչ գինի կկարգադրեք:

— Կարմիր: Սովորական, ինչպիսին ձեզ մոտ միշտ մատուցում են:

Կինը նշեց բլոկնոտի մեջ և կողքի սեղանից նրա սեղանին դրեց ջրով սափորը: Նա գլուխն օրորեց.

— Ոչ, շնորհակալ եմ, ոչ ջուր, ոչ էլ ջրով գինի երբեք չեմ խմում: L’eau gate le vin comme la charette le chemin et la femme – l'âme[3].

— Լավ կարծիքի եք մեր մասին,— անտարբեր պատասխանեց կինը և գնաց օղին ու սելյոդկան բերելու: Նա նայեց կնոջ ետևից, թե նա ինչպես ուղիղ էր իրեն պահում, ինչպես էր քայլելիս շարժվում նրա սև զգեստը... Այո, քաղաքավարություն և անտարբերություն, համեստ և արժանավոր ծառայողի պահվածք ու շարժուձև: Սակայն թանկարժեք կոշիկներ է հագին: Որտեղի՞ց: Հավանաբար ունի տարեց, հարուստ «ami»[4]: Նա վաղուց այնպես կայտառ չէր եղել, ինչպես այդ երեկո, շնորհիվ այդ կնոջ և վերջին միտքը նրա մեջ որոշ ջղայնություն առաջ բերեց: Այո, տարեցտարի, օրեցօր թաքուն սպասում ես միայն մի բանի՝ երջանիկ սիրային հանդիպման, ապրում ես փաստորեն այդ հանդիպման հույսով միայն, և սակայն ապարդյուն...

Հաջորդ օրը նա նորից եկավ ու նստեց իր սեղանիկի մոտ: Կինը սկզբում զբաղված էր, պատվեր էր ընդունում երկու ֆրանսիացիներից ու բարձրաձայն կրկնում, նշելով բլոկնոտում:

— Caviar rouge, salade russe... Deux chachlyks…[5]

---

[3] Ջուրը փչացնում է գինին, ինչպես սայլը՝ ճանապարհը և կինը՝ հոգին *(ֆրանս.)*::

[4] «Ընկեր» *(ֆրանս.)*:

[5] Կարմիր խավիար, ռուսական սալաթ…, երկու խորոված… *(ֆրանս.)*:

Հետո դուրս եկավ, վերադարձավ ու մոտեցավ նրան թեթևակի ժպտալով, ինչպես ծանոթի.

— Բարի երեկո: Հաճելի է, որ մեր ճաշարանը ձեզ դուր է եկել:

Նա ուրախ կիսաբարձրացավ տեղից.

— Բարիողջույն: Շատ է դուր եկել: Ձեզ ինչպես կարելի է կոչել:

— Օլգա Ալեքսանդրովնա: Իսկ ձեզ, թույլ տվեք հարցնել:

— Նիկոլայ Պլատո՛նիչ:

Նրանք իրար ձեռք սեղմեցին, և կինը ձեռքն առավ բլոկնոտը.

— Այսօր մենք հիանալի աղապուր ունենք: Մեր խոհարարը շատ լավ է պատրաստում, Մեծ իշխան Ալեքսանդր Միխայլովիչի նավում է ծառայել:

— Հիանալի է, աղապուր եք ասում, թող աղապուր լինի... Իսկ դուք վաղո՞ւց եք այստեղ աշխատում:

— Երրորդ ամիսն է:

— Իսկ առաջ որտե՞ղ էիք աշխատում:

— Առաջ վաճառող էի Printemps-ում:

— Հավանաբար կրճատումների պատճառո՞վ զրկվեցիք աշխատանքից:

— Այո, իմ կամքով չէի թողնի:

Նա հաճույքով մտածեց, որ ուրեմն բանը «ami»-ն չէ, և հարցրեց.

— Ամուսնացա՞ծ եք:

— Այո:

— Իսկ ձեր ամուսինը ի՞նչ է անում:

— Աշխատում է Հարավսլավիայում: Սպիտակ շարժման նախկին մասնակիցներից է: Դուք նույնպե՞ս, կարծում եմ:

— Այո, մասնակցել եմ և մեծ, և քաղաքացիական պատերազմներին:

— Դա անմիջապես երևում է: Եվ, հավանաբար, գեներա՞լ եք,— ասաց կինը ժպտալով:

— Նախկին: Հիմա գրում եմ այդ երկու պատերազմների պատմությունը արտասահմանյան զանազան հրատարակչությունների պատվերներով... Բայց դուք ինչպե՞ս եք ապրում մենակ:

— Այդպես էլ ապրում եմ մենակ…

Երրորդ երեկոյան նա հարցրեց,

— Դուք կինո սիրո՞ւմ եք:

Կինը պատասխանեց, սեղանին դնելով բորշչի պնակը.

— Երբեմն հետաքրքիր է լինում:

— Ահա հիմա «Etoile» կինոթատրոնում ասում են մի շատ լավ ֆիլմ է գնում: Կուզեի՞ք գնանք նայենք: Դուք, իհարկե, հանգստյան օր ունենում եք, չէ՞,

— Շնորհակալ եմ: Ազատ եմ լինում երկուշաբթի օրերը:

— Գնանք, ուրեմն, երկուշաբթի: Այսօր ի՞նչ է: Շաբա՞թ: Կնշանակի վաղը չէ մյուս օրը: Համաձա՞յն եք:

— Համաձայն եմ: Վաղը դուք երևի չե՞ք գալու:

— Ոչ, գնում եմ քաղաքից դուրս, ծանոթներիս մոտ: Իսկ ինչո՞ւ եք հարցնում:

— Չգիտեմ... Տարօրինակ է, բայց արդեն մի տեսակ ընտելացել եմ ձեզ:

Նա շնորհակալ նայեց կնոջն ու կարմրեց:

— Ես էլ ձեզ: Գիտեք, կյանքում այնքան քիչ են լինում երջանիկ հանդիպումներ...

Ու շտապեց փոխել խոսակցությունը:

— Այսպես, ուրեմն, վաղը չէ մյուս օրը: Որտե՞ղ հանդիպենք: Դուք որտե՞ղ եք ապրում:

— Motte-Picquet մետրոյի մոտ:

— Տեսնում եք, շատ հարմար է՝ ուղիղ գիծ է մինչև Etoile: Ես ձեզ կսպասեմ այնտեղ մետրոյի ելքի մոտ ուղիղ ժամը ութն անց կեսին:

— Շնորհակալություն:

Նա կատակով գլուխ տվեց.

— C'est moi qui vous remercie[6]: Երեխաներին պառկեցրեք քնելու,— ասաց ժպտալով, որպեսզի իմանա կինը երեխա ունի՞, թե ոչ,— և եկեք:

— Փառք աստծու, այդ մի բանից փրկված եմ,— պատասխանեց կինն ու սահուն քայլվածքով տարավ նրա մոտից ափսեները:

Նա հուզված էր և մռայլ տուն վերադառնալիս: «Արդեն ընտելացել եմ ձեզ...»: Այո, թերևս հենց սա է այն երկար սպասված երջանիկ հանդիպումը: Միայն թե ուշ է, շատ ուշ Le bon Dieu envoie toujours des culottes à ceux qui n'ont pas de derrière…[7]

Երկուշաբթի երեկոյան անձրև էր գալիս, Փարիզի վրա կախված թխպոտ երկինքը պղտոր կարմրին էր տալիս: Հույս ունենալով կնոջ հետ ընթրելու Մոնպառնասում, նա չէր ճաշել, մտավ Chaussée de la Muette սրճարան, կերավ խոզապուխտով սանդվիչ, մի գավաթ գարեջուր խմեց, ծխեց, ապա դուրս եկավ ու նստեց տաքսի: Մետրոյի Etoile մուտքի մոտ վարորդին կանգնեցրեց ու անձրևի տակ դուրս եկավ մայթ. գեր, կապտա-կարմիր այտերով վարորդը վստահելով սպասեց նրան: Մետրոյից բաղնիքաշունչ էր փչում, խիտ ու սև բարձրանում էին սանդուղքներով մարդիկ, քայլելիս բացելով հովանոցները, լրագրավաճառները նրա կողքին բադի կռկռոցի նման ցածր բղավում էին երեկոյան թերթերի անունները: Հանկարծ բարձրացող մարդկանց մեջ երևաց կինը: Նա ուրախ շարժվեց կնոջն ընդառաջ.

— Օլգա Ալեքսանդրովնա…

---

[6] Ես եմ ձեզնից շնորհակալ *(Ֆրանս.)*:

[7] Բարեգութ աստված շալվար է տալիս միշտ նրան, ով հետև չունի *(Ֆրանս.)*:

Շքեղ և մոդայիկ հագնված, կինը ազատ, ոչ այնպես, ինչպես ճաշարանում, նրան հառեց սևով եզերված աչքերը, կանացի նազանքով նրան մեկնեց ձեռքը, որից կախ էր ընկած հովանոցը, մյուս ձեռքով բռնելով երեկոյան երկար զգեստի փեշը,— նա Է՛լ ավելի ուրախացավ. «Երեկոյան զգեստը նշանակում է՝ նա էլ է մտածել, որ կինոյից հետո մի տեղ կգնանք»,— ու ծալելով կնոջ ձեռնոցի եզրը, համբուրեց սպիտակ ձեռքը:

— Խեղճ, դուք շա՞տ եք սպասել:

— Ոչ, հենց նոր եկա: Շուտ գնանք տաքսի նստենք...

Եվ վաղուց չապրած հուզմունքով քայլեց կնոջ ետևից դեպի կիսամութ, խոնավ մահուդի հոտով կառքը: Փողոցի դարձումին կառքն ուժեղ երերաց, ներսը մի պահ լուսավորվեց լապտերից. նա ակամա պահեց կնոջ մեջքը գրկելով, զգաց նրա այտերի դիմափոշու հոտը, տեսավ խոշոր ծնկները երեկոյան սև զգեստի տակ, սև աչքի փայլը և կարմիր շրթներկով ներկված լիքը շրթունքները, հիմա բոլորովին ուրիշ կին էր նստած նրա կողքին:

Մութ սրահում, նայելով էկրանի կապտին տվող սպիտակությանը, որի վրա ամպերի մեջ շեղ թռչում ու ընկնում էին ուժեղ բզզացող փռված սավառնակները, նրանք կամացուկ խոսում էին.

— Դուք մենա՞կ եք, թե որևէ ընկերուհու հետ եք ապրում:

— Մենակ եմ: Ճիշտն ասած, սարսափելի է: Փոքրիկ հյուրանոցը մաքուր է, տաք, բայց գիտեք, այնպիսի տեղ է, ուր կարելի է գնալ մի գիշեր կամ մի քանի ժամ անցկացնելու աղջկա հետ… Վեցերորդ հարկում եմ, վերելակ, իհարկե, չկա, սանդուղքին գցված կարմիր գորգիկը չորրորդ հարկում վերջանում է... Գիշերը, անձրևին սոսկալի տխրություն է պատում: Պատուհանը բացում ես՝ ոչ մի տեղ ոչ մի կենդանի շունչ, բոլորովին մեռած քաղաք է, չգիտես ուր ներքևում մի լապտերիկ է վառվում անձրևի տակ... Իսկ դուք, իհարկե, ամուրի եք և նույնպես ապրում եք հյուրանոցո՞ւմ …

— Ես մի ոչ մեծ բնակարան ունեմ Պասսի փողոցում: Նույնպես մենակ եմ ապրում: Հին փարիզցի եմ: Մի ժամանակ ապրում էի Պրովանսում, ֆերմա էի վարձում, ուզում էի հեռանալ բոլորից և ամեն ինչից, ապրել ձեռքիս աշխատանքով, չդիմացա այդ աշխատանքին: Օգնական վերցրի մի կազակի. բայց հարբեցող, մռայլ, հարբած ժամանակ սարսափելի մարդ դուրս եկավ, հավեր, ճագարներ էի պահում՝ սատկում էին, ջորին մի անգամ քիչ էր մնում ինձ կրծոտեր, շատ կատաղած ու խելացի կենդանի է... Իսկ գլխավորը՝ լրիվ միայնությունս է: Կինս ինձ լքեց դեռ Կոստանդնուպոլսում:

— Կատակո՞ւմ եք:

— Բնավ: Շատ սովորական պատմություն է: Qui se marie par amour a bonne nuits et mauvais jours.[8]

Իսկ ես նույնիսկ ոչ մեկը, ոչ մյուսը կարգին չունեցա: Լքեց ամուսնության երկրորդ տարում:

— Որտե՞ղ է նա հիմա:

— Չգիտեմ:

Կինը երկար լռում էր: Էկրանի վրա ապուշի նման վազվզում էր չռված ոտնաթաթերին անհեթեթ մեծ ու քրքրված կոշիկներ քաշած և կոտելոկը թեք դրած Չապլինին ինչ-որ մի նմանակող:

— Այո, դուք երևի ձեզ շատ միայնակ եք զգում,— ասաց կինը:

---

[8] Ով ամուսնանում է սիրելով, ունենում է լավ գիշերներ և վատ օրեր *(Ֆրանս.):*

— Ճիշտ է: Ինչ արած, պետք է դիմանալ: Patience — medicine des pauvres.[9]

— Շատ տխուր médecine է:

— Այո, տխուր: Այն աստիճան,— ասաց նա քմծիծաղով,— որ երբեմն նույնիսկ «Իլյուստրիրովանայա Ռոսիա» էի նայում, այնտեղ, գիտեք, կա մի բաժին, որտեղ ամուսնական և սիրային հայտարարությունների նման մի բան են տպում. «Լատվիայում ապրող մի ռուս աղջիկ տխրում է և կուզենար նամակագրություն ունենալ փարիզցի զգայուն մի ռուսի հետ, խնդրելով նրան ուղարկել իր լուսանկարը... Լուրջ մի տիկին, շագանակահեր, ոչ մոդեռն, սակայն հաճելի արտաքինով, այրի, որ ունի ինը տարեկան որդի, լուրջ նպատակով ուզում է նամակագրություն ունենալ ողջամիտ պարոնի հետ, քառասունից ոչ պակաս տարիքի, նյութապես ապահովված վարորդական կամ որևէ այլ աշխատանքով, ընտանեկան կյանք սիրող: Ինտելիգենտությունը պարտադիր չէ...»: Լիովին հասկանում եմ նրան՝ պարտադիր չէ:

— Բայց մի՞թե դուք բարեկամներ, ծանոթներ չունեք:

— Բարեկամներ չունեմ: Իսկ ծանոթները վատ սփոփանք են:

— Ո՞վ է ձեր տնտեսությունը վարում:

— Համեստ տնտեսություն ունեմ: Սուրճը ինքս եմ ինձ համար պատրաստում, նախաճաշը նույնպես ինքս եմ պատրաստում: Երեկոյան գալիս է femme de ménage[10].

— Խեղճ,— ասաց կինը, նրա ձեռքը սեղմելով:

Եվ նրանք երկար նստած էին այդպես, ձեռք ձեռքի, միավորված կիսամթով, տեղերի մոտիկությամբ, ձևացնելով, թե նայում են էկրանին, դեպի որը նրանց գլխների վրայով ձգվում էր կապտակավճային լույսի շերտը ետևի պատի խցիկից: Չապլինին նմանակողը, որի գլխից սարսափից պոկվել էր ջարդված կոտելոկը, թափով թռչում էր հեռագրասյան վրա՝ ծխացող ինքնաեռի խողովակով նախնադարյան ավտոմոբիլի կտորտանքի միջից: Բարձրախոսը՝ երաժշտական ոռնում էր բազմաձայն, ներքևից, ծխախոտի ծխով լցված դահլիճի խորքից,— նրանք նստած էին բալկոնում, ծափահարությունների հետ թնդում էր մոլեգին-ուրախ քրքջոց: Նա թեքվեց դեպի կինը:

— Գիտեք ինչ: Գնանք Մոնպառնասում մի որևէ տեղ, այստեղ շատ ձանձրալի է և շնչելու օդ չկա...

Կինը գլխով արեց ու սկսեց ձեռնոցը հագնել:

Նորից նստելով կիսամութ կառք և նայելով անձրևից կայծկլտող ապակիներին, որ շարունակ գույնզգույն գոհարներով լուսավորվում էին լապտերների լույսից ու սև բարձրում մերթ արնակարմիր, մերթ սնդիկագույն երփներանգող ռեկլամներից, նա նորից ետ տվեց կնոջ ձեռնոցի եզրն ու երկար համբուրեց նրա ձեռքը: Կինը նայեց նրան նույնպես տարօրինակ կայծկլտող աչքերով՝ ածխասև թերթերունքներով ու սիրով-տխուր մոտեցրեց նրան դեմքը՝ լիքը, շրթներկից քաղցրահամ շրթունքներով:

«Coupole» սրճարանում սկսեցին ընթրիքը ոստրեով և անժուով, հետո պատվիրեցին կաքավամիս և բորդո: Սուրճի ժամանակ, որ խմում էին դեղին շարտրեզի հետ, երկուսն էլ թեթևակի հարբել էին: Շատ էին ծխում, մոխրամանը լցված էր կնոջ արնոտած ծխախոտի մնացուկներով: Նա խոսելով նայում էր կնոջ տաքացած դեմքին ու մտածում, որ նա իսկապես գեղեցկուհի է:

---

[9] Համբերությունը խեղճերի բժշկությունն է *(ֆրանս.):*

[10] Երկող-գնացող տան ծառայող *(ֆրանս.):*

— Սակայն ճիշտն ասացեք,— ասում էր կինը, մատներով զգույշ լեզվի ծայրից վերցնելով ծխախոտի մնացուկները,— չէ՞ որ այս տարիների ընթացքում դուք հանդիպումներ ունեցել եք:

— Ունեցել եմ: Բայց ինքներդ էլ հասկանում եք, թե ինչ կարգի: Գիշերային հյուրանոցներ... Իսկ դո՞ւք:

Կինը լռում էր:

— Ունեցել եմ մի շատ ծանր պատմություն... Ոչ, չեմ ուզում այդ մասին խոսել: Լակոտի մեկը, սուտնյոր է… Բայց դուք ինչպե՞ս բաժանվեցիք ձեր կնոջից:

— Ամոթալի կերպով: Նույնպես լակոտի մեկն էր, շատ գեղեցիկ հույն լակոտ, չափազանց հարուստ: Եվ մեկ, երկու ամսից արդեն հետք էլ չմնաց այն մաքուր, հուզիչ աղջկանից, որ ուղղակի պաշտում էր սպիտակ բանակը, մեզ բոլորիս: Սկսեց նրա հետ ընթրել Բերայի ամենաթանկ պանդոկում, նրանից ծաղիկներ ստանալ վիթխարի զամբյուղներով. «Չեմ հասկանում, դու մի՞թե կարող ես ինձ խանդել նրա հանդեպ: Դու ամբողջ օրը զբաղված ես, ինձ համար նրա հետ ուրախ է, նա ինձ համար պարզապես սիրելի փոքրիկ տղա է, ուրիշ ոչինչ...»: Սիրելի փոքրիկ տղա: Իսկ կինս էլ քսան տարեկան էր: Հեշտ չէր մոռանալ նրան՝ ինչպիսին որ էր առաջ, եկատերինոդարյան կնոջս...

Երբ հաշիվը բերեցին, կինը ուշադիր նայեց և թույլ չտվեց տասը տոկոսից ավելին թողնել ծառայության համար: Դրանից հետո նրանց երկուսին Է՛լ ավելի տարօրինակ թվաց մի կես ժամից բաժանվելը:

— Գնանք ինձ մոտ,— ասաց նա տխուր:— Կնստենք, մի քիչ էլ կխոսենք…

— Այո, այո,— ասաց կինը, վեր կենալով, նրան թևանցուկ անելով ու սեղմելով իրեն:

Գիշերային վարորդը, ռուս, նրանց բերեց միայնակ այն նրբանցքը, բարձր տան շքամուտքի մոտ, որի առջև գազալապտերի մետաղյա լույսի տակ անձրևը լցվում էր թիթեղյա աղբարկղի մեջ: Մտան լուսավորված նախասրահ, հետո նեղլիկ վերելակի մեջ և դանդաղ բարձրացան դեպի վեր, գրկախառնված ու համբուրվելով: Նա հաջողացրեց բանալին մտցնել իր դռան անցքը, մինչև էլեկտրականությունը կհանգեր, ու ներս տարավ նրան նախասենյակ, հետո փոքրիկ ճաշասենյակ, ուր ջահի մեջ աղոտ վառվում էր միայն մի լապտերիկ: Նրանց դեմքերն արդեն հոգնած էին: Նա առաջարկեց էլի գինի խմել:

— Ոչ, սիրելիս,— ասաց կինը,— ես էլ չեմ կարող:

Նա սկսեց խնդրել:

— Խմենք միայն մի-մի գավաթ, սպիտակ գինի, պատուհանիս ետև հրաշալի պուի է դրված:

— Խմեք, սիրելիս, իսկ ես էլ գնամ հանվեմ և լվացվեմ: Եվ քնենք, քնենք: Մենք երեխաներ չենք, դուք, կարծում եմ, շատ լավ գիտեք, որ եթե ես համաձայնվեցի գալ ձեզ մոտ... Եվ հետո, մենք ինչո՞ւ բաժանվենք:

Նա հուզմունքից չէր կարողանում պատասխանել, լուռ տարավ նրան ննջասենյակ, նրա համար լույսը վառեց և լողասենյակում, որի դուռը բաց էր դեպի ննջարան: Այստեղ լամպիկները վառվում էին պայծառ, վառարաններից տաքություն էր սփռվում ամեն կողմ, մինչ տանիքին համար ու արագ թակում էր անձրևը: Կինը անմիջապես սկսեց գլխի վրայով հանել երկար զգեստը:

Նա դուրս եկավ, երկու գավաթ իրար ետևից խմեց սառցասառն, դառն գինուց և չկարողացավ զսպել իրեն, նորից գնաց ննջարան: Ննջարանում դիմացի պատի մեծ հայելու մեջ պարզ արտացոլվում էր լուսավորված լողասենյակը: Կինը կանգնած էր մեջքով դեպի նա, լրիվ մերկ, սպիտակ, ամրակազմ, լվացարանի վրա կռացած, լվանում էր վիզն ու կուրծքը:

— Այստեղ չի կարելի,— ասաց նա, վրան գցելու լողախալաթը, չփակելով պիրկ կուրծքը, սպիտակ պինդ փորը և սպիտակ պինդ ազդրերը, մոտեցավ և արդեն ինչպես նրա կինը, փարվեց նրան: Եվ ինչպես իր կնոջը գիրկն առավ նրան և նա, գիրկն առավ նրա զով մարմինը, համբուրելով դեռ խոնավ, անուշահոտ օճառի բուրմունքով կուրծքը, աչքերն ու շրթունքները, որից նա արդեն մաքրել էր ներկը…

Մի օրից, աշխատանքը թողնելով, կինը տեղափոխվեց նրա մոտ:

Մի անգամ ձմռանը նա համոզեց կնոջը իր անունով սեյֆ վերցնել Լիոնյան բանկում և դնել այնտեղ ամբողջը, ինչ վաստակել էր նա:

— Զգուշությունը երբեք վնաս չի,— ասում էր նա:— L’amoure fait danser les ânes[11], և ես ինձ զգում եմ այնպես, ասես քսան տարեկան լինեմ: Բայց ինչ ասես կարող է պատահել...

Զատիկի երրորդ օրը նա մահացավ մետրոյի վագոնում, թերթ կարդալիս, հանկարծ գլուխը ետ գցեց նստոցի թիկնակին, աչքերը փակեց...

Երբ կինը, սքազգեստով, վերադառնում էր գերեզմանոցից, հաճելի գարնանային օր էր, տեղ-տեղ փարիզյան մեղմ երկնքում լողում էին գարնանային ամպերը, և ամեն ինչ խոսում էր կյանքի մասին՝ մատաղ, հավերժական, ու նրա կյանքի մասին, որ վերջացած էր:

Տանը կինն սկսեց մաքրել բնակարանը: Միջանցքում, որմնապահարանի մեջ տեսավ նրա հին ժամանակների ամառային շինելը՝ մոխրագույն, կարմիր աստառով: Կինը հանեց այն կախիչից, սեղմեց երեսին ու այդպես սեղմած նստեց հատակին ամբողջ մարմնով ցնցվելով բղավելով, գութ աղերսելով չգիտես ումից:

26 հոկտեմբերի 1940

[11] Սերը պարացնում է նույնիսկ էշերին *(ֆրանս.):*